ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

*Archbishop Torkom Manoogian, Primate*

Մարտ 2, 1990

Արժանաշնորհ
Տ. Արշէն Քհնյ. Այվազեան
Հովիւ Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ֆէրլոն.

Սիրելի Տէր Հայր,

Ստացուած է Առաջնորդ Սրբազան Հօր ուղղուած Փետրուար 14, 1990 թուակիր ձեր նամակը։

Այս նամակով կը տեղեկացնէք թէ Փետրուար 4-ին, 1990, տեղի ունեցած է համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը, եւ այդ առթիւ ընտրուած են նաեւ Ծխական Խորհուրդի հինգ անդամները։ Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացումը։

Այս գրութեամբ կը փափաքիմ տեղեկացնել որ կը վաւերացուի Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը՝

Թիոտոր Թագւորեան
Թովմաս Աշպահեան
Պերճ Ֆէրէճեան
Արտա Գիլճեան
Փօլ Փինաճեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը։

Ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթեմ յառողջութիւն եւ ձեր բոլորին եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն։

Աղօթակից

Խաժակ Վրդ. Պարսամեան
Առաջնորդի Փոխանորդ